ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 բ. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

21 մարտ 2014թ. N 71

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 18-ի թիվ 15,16-Ն,17-Ն,18-Ն, 19,20 և 21 որոշումները:

Առդիր՝ 9 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Գարիկ Բաղալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 15

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 18-ի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 82-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Ծաղկաձոր քաղաքում աղբահանության կարգը հաստատելու մասին:
3. Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասեր աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:
4. Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում երիտասարդների ընդգրկման մասին:
5. Համայնքային սեփականություն համարվող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին:
6. Ծաղկաձոր քաղաքի օրվա քննարկման մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 16-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձորի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի "Ծաղկաձորի քաղաքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 82-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Տող1256 - Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ ,,977.7 հազ.դրամը, փոխարինել 5371.3 հազ. դրամ":

2) Տող1257 - Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) "5543.7 հազ.դրամը, փոխարինել 1359.6 հազ. դրամ":

3) Տող1393 -Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ ,,1700.0 հազ.դրամը, փոխարինել 12700.0 հազ. դրամ":

4) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում) հոդված 4214 (Կապի ծառայություններ) "850.0հազ. դրամը փոխարինել 990.0հազ. դրամ":

5) Բաժին 1 խումբ 3 դաս 3 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդված 4232 (Համակարգչային ծառայություններ) "200.0հազ. դրամը փոխարինել 300.0հազ. դրամ":

6) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 4241 (Մասնագիտական ծառայություններ) "1000.0հազ. դրամը փոխարինել 2000.0հազ. դրամ":

7) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) "15000.0հազ. դրամը փոխարինել 40000.0հազ. դրամ":

8) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) "4500.0հազ. դրամը փոխարինել 5500.0հազ. դրամ":

9) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) " 9503.2 հազ. դրամը փոխարինել 19503.2 հազ. դրամ":

10) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4261 (Գրասենյակային նյութեր և հագուստ) " 2000.0 հազ. դրամը փոխարինել 3670.0 հազ. դրամ":

11) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "800.0 հազ. դրամը փոխարինել 220.0 հազ. դրամ":

12) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4639 (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) "800.0 հազ. դրամը փոխարինել 0.0 հազ. դրամ":

13) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) "135000.0 հազ. դրամը փոխարինել 109000.0 հազ. դրամ":

14) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) "0.0 հազ. դրամը փոխարինել 9000.0 հազ. դրամ":

15) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "800.0 հազ. դրամը փոխարինել 1000.0 հազ. դրամ":

16) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4261 (Գրասենյակային նյութեր և հագուստ) "0.0 հազ. դրամը փոխարինել 300.0 հազ. դրամ":

17) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) "0.0 հազ. դրամը փոխարինել 900.0 հազ. դրամ":

18) Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) "1000.0 հազ. դրամը փոխարինել 2000.0 հազ. դրամ":

19) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) "128929.0 հազ. դրամը փոխարինել 118929.0 հազ. դրամ":

20) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված 4891 (Պահուստային միջոցներ) "5801.4 հազ. դրամը փոխարինել 4080.9 հազ. դրամ":

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 17-Ն

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ծաղկաձորի քաղաքային համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Ծաղկաձոր համայնքում աղբահանության կարգը հաստատելու մասին» թիվ 53-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2014 թվականի մարտի 18-ի թիվ 17-Ն որոշման

ԿԱՐԳ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է համայնքում աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների և կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը:
2. Աղբահանությունը համայնքում կազմակերպվում է՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները:
3. Աղբամաններ տեղադրվում են հետևյալ վայրերում՝
   1) Խ.Մուրադյան փողոց թիվ 5 հասցեին հարակից տարածքում՝ 3 հատ 1000 լիտր տարողությամբ,
   2) Անտառային 1 թաղամաս թիվ 29 հասցեին հարակից տարածքում՝ 3 հատ 240 լիտր տարողությամբ,
   3) ԳՄՀ հարակից տարածքում՝ 1 հատ 240 լիտր տարողությամբ,
   4) Անտառային 2 թաղամաս թիվ 1 հասցեին հարակից տարածքում՝ 1 հատ 240 լիտր տարողությամբ,
   5) Խ.Կեչառեցու թիվ 8 հասցեին հարակից տարածքում՝ 3 հատ 1000 լիտր տարողությամբ,
   6) Գ.Մագիստրոսի փողոց թիվ 7 հասցեին հարակից տարածքում՝ 2 հատ 360 լիտր տարողությամբ և 1 հատ 240 լիտր տարողությամբ,
   7) Պահլավունյաց փողոց թիվ 2 հասցեին հարակից տարածքում՝ 1 հատ 1000 լիտր տարողությամբ,
   8) Սարալանջի փողոց թիվ 5 հասցեին հարակից տարածքում՝ 1 հատ 1000 լիտր տարողությամբ,
   9) Իսահակյան փակուղի թիվ 19 հասցեին հարակից տարածքում՝ 1 հատ 1000 լիտր տարողությամբ,
   10) Խ.Մուրադյան փողոց թիվ 18 հասցեին հարակից տարածքում՝ 1 հատ 240 լիտր տարողությամբ և 3 հատ 360 լիտր տարողությամբ,
   11) Օրբելի եղբայրների նրբանցքում՝ 2 հատ 1000 լիտր տարողությամբ,
   12) Կ.Անդրեասի փողոց թիվ 13/2 հասցեին հարակից տարածքում՝ 2 հատ 1000 լիտր տարողությամբ,
4. Աղբահանություն իրականացվում է աղբամաններում աղբի հավաքման, փոխադրման և աղբավայրում տեղադրման միջոցով և հատուկ կահավորված մեքենայի միջոցով բնակչությունից:
5. Աղբահանություն կատարվում է շաբաթվա ընթացքում առնվազն հինգ անգամ՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, ընդ որում աղբը պետք է տեղափոխվի մինչև աղբամանի լցվելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 18-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Օտարել համայնքային սեփականություն համավող քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց թիվ 10/2 հասցեում գտնվող հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.065 հա մակերեսով հողամասը աճուրդային կարգով:

2.Հողամասերի մեկնարկային գինը սահմանել դրանց կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 19

ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ նշանակել համայնքի ավագանու ամենաերիտասարդ անդամ՝ Յուրա Մանուկյանին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 20

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, Ծաղկաձոր քաղաքում տեղադրված 2.30մ*10.5մ չափսի տուրիստական քարտեզ ճանապարհացույց ցուցանակը 10 տարի ժամկետով՝ տարեկան 264.000 Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, վարձակալությամբ տրամադրել "Արտ Զեբրա" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2014 թվականի թիվ 21

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր քաղաքի օր նշանակել յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի առաջին շաբաթ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՈՒՇԱՏՈՊ 03001885